Հուսիկ Արա

Էգ քաղաք

Ցողի սարսուռն է քեզ հարմար գալիս որպես հոմանիշ.
արթնանում ես հրեշտակ,
առավոտյան զանգերի կանչին հնազանդ՝
մտնում եկեղեցի ու ձեռքդ սրտիդ դրած՝ պատարագ լսում,
և Աստծու տեսքը աչքերիդ մեջ դուրս գալիս փողոց,
մեղքերիդ թողություն տված քաղաք:
Կեսօրից հետո քո աղոթատեղին սրճարանն է,
ուր երկար բամբասում ես մի բաժակ սուրճի
կամ կիտրոնով օղու շուրջ,
և երկար տալ ու առնելուց չարչրկված բախտդ կորցրած՝
մտնում ես այգի ու կիսախում նիրհով ճեմում՝
կաթիլ-կաթիլ արտասվելով աչքերիդ մեջ պահած Աստծուն:
Անողորմ դիպուկահար ես իրիկվա առաջին ժամերին.
զոհիդ ընտրում ես մանրամասն հաշվարկով գրպանիդ
և գործդ անում խնամված՝ առանց պոչ թողնելու:
Հարցեր լուծող տղա ես՝ դռանը հաչող շան նման.
վնգստում ես, վրա տալիս՝ քանի դեռ կապդ չեն ձգել:
Կեսգիշերից հետո՝ էլ ի՞նչ քաղաք, ի՞նչ հարազատ տուն,
«խաղ չկան» լխկած թշերիդ՝ լակած իշխանություն ես հաստ վզով,
գիշերային ակումբների առյուծ՝ թաթիդ տակ երկրագունդը ճզմող,
մինչև խաղատնից փախ կտաս խեղճ ու ողորմելի՝ առանց քոռ լումայի:
Քո անինքնասեր քրոջ՝ Բաբելոնի արձագանքն ես, է՛գ քաղաք,
և մենք իրար հասկանում ենք գիշերային անբառ լեզվով.

քո միակ ու աղոտ հույսը ես եմ մնում լուսաբացին մոտ,
երբ հեկեկում ես պոետիս վտիտ թևերի մեջ՝
մարմնիդ վերջին փշրանքը վստահելով հենց իմ խղճին,
թեպետ արցունքիդ դառը կաթիլի մեջ
առավոտի քո աստծուց անգամ հետք մնացած չի լինում: